# ԻՆՉՈ՞Ի Է ՄԵՐԺԵԼԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարց. - Ինչո՞ւ Հայ Եկեղեցին թաղման կարգ չի կատարում ինքնասպանի վրա:

Պատասխան. - Հայ Եկեղեցին, այո, թաղման կարգ չի կատարում ինքնասպանների վրա: Ավելին. հայոց մեջ ընդունված է անգամ ինքնասպաններին թաղել ընդհանուր գերեզմաններից դուրս:

Հ. - Ինչո՞ւ:

Պ. - Կրոնա-իրավական տեսակետից միանշանակորեն արգելվում է անձնասպանին թաղելու համար քահանա բերել, այսինքն՝ եկեղեցական որևէ կարգ կամ արարողություն կատարել[1]:

Իսկ Գոշի Դատաստանագիրքը պարտադրում է քահանային քննել, ստուգել իրողության հանգամանքները և պարզաբանելուց հետո միայն կարգ կատարել: Իսկ եթե պարզվեր, որ մեռնողը ինքնասպան է եղել, կտրականապես արգելվում էր կարգ կատարելը[2]:

Եկեղեցու պատմության բոլոր ժամանակներում այս դիրքորոշումը մնացել է անփոփոխ, այսինքն՝ միշտ անհատի ինքնասպանությունը դատապարտվել է, իսկ նրանց վրա կարգ կատարող հոգևորականները՝ պատժվել են:

Բարսեղ Մեծի կանոններում դատապարտվում է անգամ «արգանդի պտուղը գիտակցաբար ոչնչացնողը», և այդ արարքը հավասարեցվում է մարդասպանության արարքին, իսկ պատիժը՝ «մարդասպանի պատժին» համազոր: «Մեղավոր կինն այս դեպքում պատժվում է ոչ միայն պտուղը ոչնչացնելու, այլև իր կյանքը վտանգի ենթարկելու համար, քանի որ շատ է պատահում, որ իրենք էլ մեռնում են դրանից»[3]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ արարքը դիտվում է որպես ինքնասպանության փորձ, և եթե «ինքնասպանը» կենդանի է մնում, ապա խստագույնս պատժվում է: Հետևաբար, կարելի է պնդել, որ Եկեղեցին վերին աստիճանի խստությամբ է մոտեցել ինքնասպանության խնդրին և կտրականապես մերժում է ինքնասպանությամբ վախճանվածների վրա որևէ եկեղեցական կարգ կատարելը, որը, կրոնական առումով, նշանակում է, որ Եկեղեցին ինքնասպաններին համարում է «Եկեղեցուց դուրս»՝ զրկված Աստծու Թագավորությանն արժանանալու հույսից:

---

[1] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հատոր Ա: Երևան, 1964, էջ 295, հատոր Բ, Երևան, 1971, էջ 104:

[2] Մ. Գոշ, Գիրք Դատաստանի: Երևան, 1975, գլուխ ՃԿԵ:

[3] Ն. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա գիրք: Ծուշի, 1903, էջ 237:

Ինչո՞ւ է այդպիսի «կոշտ» դիրք գրավել Եկեղեցին: Պարզ է, որ նման եզրահանգման համար պետք են հիմնավոր փաստարկներ, որոնցից կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ. ա) սուրբգրային հիմնավորումը և բ) կրոնա-բարոյական հիմնավորումը:

**ա) Սուրբգրային հիմնավորումը**

Ինքնասպանության մասին Ս. Գիրքը հիշատակում է ընդամենը չորս դեպք.

1. Սավուղի ինքնասպանությունը (Ա Թագ. ԼԱ 3-5),
2. Աքիտոփելի ինքնասպանությունը (Բ Թագ. ԺԷ 15-23),
3. Զամբրիի ինքնասպանությունը (Գ Թագ. ԺԶ 15-19),
4. Հուդայի ինքնասպանությունը (Մատթ. ԻԷ 5):

Բոլոր դեպքերում էլ անձնասպանները փրկչաբանական առումով կորցրել են իրենց փրկությունը և դատապարտվել, ընդ որում՝ Աստծու Դատաստանը թե՛ ներկայի առումով իրականացել, և թե՛ ապագայի առումով պիտի իրականանա Դատաստանի օրը:

Թվում է, թե հինկտակարանյան դրվագներում անձնասպանությունը կատարել են հարկադրաբար, քանի որ թե՛ Սավուղը, թե՛ Զամբրին, և թե՛ Աքիտոփելը, միևնույն է, սպանվելու էին: Անգամ այս իրողությունը «մեղմացուցիչ» հանգամանք չի կարող հանդիսանալ ինքնասպանության արարքն արդարացնելու համար: Երեքն էլ արդեն դատապարտված էին մինչև այդ արարքը և, որպես հետևանք, իրենց՝ մինչ այդ ունեցած վարքի ու ընթացքի, դիմել են այդ քայլին՝ լավ իմանալով, որ այդ քայլով իրենք դարձյալ ըմբոստանում են Աստծու դեմ: Համաձայն Ս. Գրքի, «թե՛ կյանքը, և թե՛ մահը Աստծուն է պատկանում» (հմմտ. Բ Օր. ԼԲ 39), և միայն Աստված է, որ կարող է իրագործել դատաստանը: Հենց այս առումով էլ թե՛ Սավուղը, թե՛ Աքիտոփելը և թե՛ Զամբրին անգամ կյանքի վերջին վայրկյանին ըմբոստ գտնվեցին Աստծու հանդեպ՝ ինքնասպանություն գործելով:

Հուդայի պարագան որոշ չափով տարբերվում է վերը նշած երեք դեպքերից: Որպես կանոն, մեղքը գործելուց հետո մեղանչողը ձգտում է ազատվել մեղքի կործանարար հետևանքներից: Նա ձգտում է «ետ տալ» ժամանակը, որպեսզի «սրբագրի» իր արարքը, բայց՝ ավա՜ղ: Արարքները, որ գործվել են, այլևս չեն «սրբագրվում»: Դրանց համար արդեն պետք է պատասխան տալ: Հուդայի արատավոր ընթացքի տրամաբանական ավարտը հենց այդպիսին պետք է լիներ՝ դատապարտված թե՛ այս աշխարհում, թե՛ հանդերձյալում: Մեղքի էությունն է այս, և դրանից խուսափել չի կարող ոչ մեկը:

**բ) Կրոնա-բարոյական հիմնավորումը**

Տասնաբանյայի վեցերորդ պատվերը արգելում է սպանել մարդուն: Ծննդոց Թ 6 համարը ուղղակի հրահանգում է, որ «ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետև Աստծու պատկերով եմ ստեղծել մար-

դուն»: Հետևաբար, մարդը, Արարչագործության պսակը հանդիսանալով, եզակի է իր էության մեջ: Նա կրում է իր մեջ իր Արարչի՝ Աստծու պատկերն ու նմանությունը: Այդ եզակի արարածին պահպանելու համար էլ տրվեց Օրենքը, կամ այն իրավական հիմքը, որը ապահովելու էր մարդու կյանքի անձեռնմխելիությունը: Այս առումով էլ մարդն իր կյանքի տերը չէ, նա չի կարող տնօրինել իրեն տրված այդ մեծագույն շնորհն ըստ իր քմահաճույքի: Քարոզգիրքը համեմատելով մարդասպանին ինքնասպանի հետ՝ վերջինիս արարքը շատ ավելի մեծ մեղք է համարում[4]: Բերված փաստարկները այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը:

Ո՞րն է ավելի մեծ մեղք՝ սպանե՞լը, թե՞ ինքն իրեն սպանելը: Տաթևացին միանշանակորեն պատասխանում է, որ անձնասպանությունը շատ ավելի մեծ մեղք է սպանության համեմատ, և բերում է երեք փաստարկ.

- Կենդանի մնալով՝ մարդասպանը կարող է հետագայում ապաշխարությամբ քավել իր մեղքը, ինչպես Ղուկիանոսը[5] և բազում հրեաներ, որոնք խաչեցին Քրիստոսին և ապաշխարությամբ քավեցին իրենց մեղքերը:

Հուդան չկարողացավ ապաշխարել և մեղքով դժոխք իջավ:

- Ուրիշներին սպանողը թշնամի և հակառակ է դառնում մարդկանց, իսկ անձնասպանը Աստծուն է հակառակվում, քանի որ Աստծու գործն է մարմնի կապելն ու արձակելը:

- Ուրիշին սպանողի համար հնարավորություն կա իր արյամբ վճարել թափած արյան դիմաց և, ինչպես Օրենքն է ասում, վճարում է այստեղ՝ այս աշխարհում: Իսկ իրեն սպանողը անվերջ պատժվում է հանդերձյալում: Ուրեմն որքան մեծ է հավիտենական տանջանքն այս աշխարհում մարմնի տանջանքից, այնքան մեծ մեղք է իրեն սպանելը և անվախճան տանջանքի արժանանալը ուրիշին սպանելուց և այստեղ տանջանքը կրելուց:

Վերջին ժամանակներս հույժ արդիական է դարձել ինքնասպանության խնդիրը: Վերջերս մեծ աղմուկ հանած խմբակային ինքնասպանության փաստերը ամբողջատիրական (տոտալիտար) աղանդներում կրկին անգամ ցույց տվեց, թե որքան ճիշտ է եղել Եկեղեցու դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ: Ամերիկյան Ջոնստաունում աղանդապետ Ջիմի Ջոնսի հրամանով ինքնասպանություն են գործում միանգամից 900 անդամներ (1978 թ.), իսկ «Դավթի սերնդի» աղանդապետ Դավիթ Կորեշը, հիմնվելով մի քանի սուրբգրային համարների վրա (օրինակ՝ Երեմիա Ծ 52), ինքնակիզման հրաման տվեց, և 86 անդամ իրենք իրենց կրակը նետեցին (1993 թ.): Փաստորեն բոլոր ամբողջատիրական աղանդներում առկա է թե՛ Ջիմի Ջոնսի, և թե՛ Դավիթ Կորեշի ոգին:

Այսօր Հայաստանում արդեն հաստատվել են ամբողջատիրական որոշ աղանդներ (Եհովայի վկաներ, խարիզմատներ և այլն), որոնց մոլեռանդության չափը սահ-

---

[4] Գ. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամառան հատոր: Կ. Պոլիս, 1731, էջ 20-21:

[5] Հիսուսին գեղարդով խոցող հարյուրապետը:

ման չունի: Նրանց «ջանասիրությանը» ականատես ենք լինում ամեն օր և ամեն տեղ՝ Երևանի փողոցներում ու կանգառներում:

Այսօր արդեն մեր բժիշկներին մտահոգում է Եհովայի վկաների արյան փոխներարկման վերաբերյալ մոլեռանդ քարոզներն ու արգելքները: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ Ջիմի Ջոնսի ոգին: Եհովայի վկաների այդ արգելքը շատ չի տարբերվում ինքնասպանության արարքից...

*ՍԵՐԺ ՄԱՑԻԼՅԱՆ*